ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/26

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Բարեյանի (լիազորագիր՝ տրված 06.05.2021թ.),

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝

Ա. Սիմոնյանի (լիազորագիր՝ տրված 05.05.2021թ.),

Ն. Թադևոսյանի (լիազորագիր՝ տրված 05.05.2021թ.),

քննելով ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ. ներկայացված (30.04.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/26 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն բողոքով վեճի առարկա է հանդիսանում Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր «հեքիաթ մանկապարտեզի» գույքի ձեռքբերման նպատակով 2021թ. ապրիլի 9-ին ժամը 21:44-ին հայտարարված N ՀՀ ԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, մասնավորապես 16.04.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը, այն է 2021 թվականի 20-ին բանակցություններ հրավիրելու մասին՝ կայացված որոշումը, 20.04.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ կայացված ամբողջ որոշումը և դրա արդյուքնում 22.04.2021 թվականին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը (գնահատող հանձնաժողովի գործողությունները) ոչ իրավաչափ ճանաչելու, դադարեցնելու պահանջը:

Բողոքի փաստացի հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր «հեքիաթ մանկապարտեզի» գույքի ձեռքբերման նպատակով 2021թ. ապրիլի 9-ին ժամը 21:44-ին հայտարարված N ՀՀ ԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ հրավիրել բանակցություններ, քանի որ Պատվիրատուի կողմից գնումների պլանով արդեն իսկ նախատեսվել էին ֆինանսական միջոցներ:

Բողոքի ապացույց.

Կցվում է նաև, մնացած ապացույցները արդեն իսկ կցված են, գնահատող հանձնաժողովի 16.04.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը, 20.04.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը և 22.04.2021 թվականին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի «գույքի ձեռքբերման նպատակով 2021թ. ապրիլի 9-ին ժամը 21:44-ին հայտարարված N ՀՀ ԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-11/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն: Հայտերի բացման օր է հանդիսացել 2021թ. ապրիլի 16-ը: Գեղաշենի համայնքապեսարանի 2021թ. գնումների պլանի 2021թ. ապրիլի 9-ի փոփոխությամբ հաստատվել և հրապարակվել է Ընթացակարգով ձեռքբերվող առարկաները նախատեսված ֆինանսական միջոցներով (կցվում է)' որպես ապացույց, որը gnumner.am կայքում հրապարակվել է 2021թ. ապրիլի 9-ին ժամը 21:45-ին, վերջինս հիմնավորելու համար կցվում է համակարգչից արտատպված համապատասխան էջը, որում արտացոլված է Ընթացակարգի հայտարարության և հրավերի, ինչպես նաև

գնումների պլանի համապատասխան փոփոխության հրապարակման օրերը և ժամերը: Ընթացակարգի հրավերը հանդիսանում է կայքում հրապարակված հրավերների օրինակելի ձևը, սակայն որում առկա են նաև այնպիսի օրենսդրական հղումներ, որոնք տվյալ ընթացակագի համար արդեն իսկ կիրառելի չեն. մասնավորապես Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները, քանի որ.

1. Ֆինանսական միջոցները արդեն իսկ գնումների պլանի համապատասխան փոփոխությամբ նախատեսված են եղել և վերջինս հրապարակվել է ընթացակարգի հայտարարությունունու հրավերը հրապարակելուց մեկ րոպե անց.

2. Ընթացակարգի հրավերով սահմանված է գնման ժամանակացույց, որտեղ նշվել է ձեռքբերման պայմանը՝ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 31.08.2021թ.

3. Ընթացակարգի հրավերով սահմանված է վճարման ժամանակցույց նշված համապատասխան տոկոսներով, ինչպես նաև գնումների պլանով նախատեսված համապատասխան հոդվածներով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2021թ. ապրիլի 16-ին թիվ 2 արձանագրության (կցվում է) 5-րդ կետով որոշում է կայացրել կիրառել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, սակայն կոպտորեն խախտվել է մեր կազմակերպության իրավունքները գնումների մրցակցային պայմաններում, քանի որ որոշ չափաբաժինների մասով, մասնավորապես՝ 1-ին, 3-5-րդ, 7-16-րդ, 18-րդ, 22-24-րդ, 27-րդ, 29-րդ չափաբաժինների մասով, մեր կազմակերպությունը հանդիսացել է բավարար հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գին առաջարկած մասնակից, որին պետք է առաջին տեղ զբաղեցնող ճանաչեր տվյալ չափաբաժինների մասով , մինչ դեռ խախտելով օրենսդրության պահանջները Ընթացակարգը չի կազմակերպել գնման գործընթացի միասնական կանոններով՝ մրցակցային, թափանցիկ, համաչափ և ոչ խտրական հիմունքներով, ինչի արդյունքում բողոքարկմամբ փորձում ենք վերականգնել մեր կազմակերպության իրավունքները և շահերը, ինչը մեր կազմակերպության գործողության կամ անգործության հետևանք չէ, ուստի նաև մատակարարման ժամկետը խնդրում ենք հետաձգել:

Բողոքի հիմքերը և հիմնավորումները

Հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է Օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Այսպես խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 15-րդ հոդվածի 6-րդ մասով, 26-րդ 1-ին մասի 5)- րդ կետով և 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ.

«2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետով սահմանված է, որ.

«1. Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնատող հանձնաժողով, որը՝

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին)»:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված է, որ.

«2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»:

Կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված է, որ.

«40. Հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-րդ հոդվածով, 50-րդ հոդվածի 1-ին և 2)-րդ մասերով և 7-րդ մասի 1)-ին կետով, 8)-րդ մասով և 51-րդ հոդվածով

Հավելում ենք նաև, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն սույն թվականին հայտնվել էր նման իրավիճակում: «Ֆոտոն» ՍՊԸ-ն 15.01.2021թ. հայտ էր ներկայացրել «ՀՀ Արմավիրի մարզի N ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1 Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ընթացակարգին, որի դեպքում գնումների պլանը հրապարկվել էր Ընթացակարգով ձեռքբերվող առարկաները նախատեսված ֆինանսական միջոցներով: Այս դեպքում ևս նույն իրավիճակն է. գնահատող հանձնաժողովի 21.01.2021թ. թիվ 2 արձանագրության 4 կետի որոշմամբ հրավիրվել ենք բանակցությունների և մասնակցել ենք: Մասնակիցներից «ՋԱՏԵԳՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք վերոնշյալի հետ կապված, որի բողոքը բավարարվել է (կցվում է «ՋԱՏԵԳՇԻՆ» ՍՊԸ-ի բողոքը և բողոքը քննող անձի կայացրած որոշումը)»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2021թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշումը,

2. Դադարեցնել 20.04.2021թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը և 22.04.2021թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումն ամբողջությամբ,

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարատվորեցնել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի 1-ին, 3-5-րդ, 7-16-րդ, 18-րդ, 22-24-րդ, 27-րդ և 29-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուն, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 30.04.2021թ. ուղարկված գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր փաստաթղթերը և կից ներկայացնում եմ կնքված պայմանագիրը 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 29 չափաբաժինների համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը նիստին, ովքեր նիստի ընթացքում հայտնել են հետևյալը.

«Թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա մրցույթի անցկացման պատճառ է հանդիսանում հենց ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելը, քանի որ համայնքապետարանը մանկապարտեզի գույքի ձեռքբերման համար ունի հատկացված բյուջե, սակայն, վճարի 50%-ը պետք է կատարվի սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, այդ պատճառով նախահաշվային գին չի նշվել»:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿՄԳՀ - ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ֆոտոն» և «Դամկար» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դամկար» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, «Ֆոտոն» ՍՊԸ-ն՝ 15-րդ, 24-րդ և 27-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿՄԳՀ - ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 29.04.2021թ.:

4. «Ֆոտոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի շրջանակներում վիճարկում է 1-ին, 3-5-րդ, 7-16-րդ, 18-րդ, 22-24-րդ, 27-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.04.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 30.04.2021թ. կնքվել է «ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 29.04.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի գրությամբ ներկայացված 30.04.2021թ. կնքված թիվ «ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիրը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1.***<u>Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին</u>*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր

մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:***

(…)

5. ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

(…)

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

1. եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

2. եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպես, ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ

ԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ֆոտոն» և «Դամկար» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դամկար» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, «Ֆոտոն» ՍՊԸ-ն՝ 15-րդ, 24-րդ և 27-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 29.04.2021թ.:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի շրջանակներում վիճարկում է 1-ին, 3-5-րդ, 7-16-րդ, 18-րդ, 22-24-րդ, 27-րդ և 29-րդ չափաբաժինների մասով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.04.2021թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 30.04.2021թ. կնքվել է «ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից բողոքով վկայակոչված հանգամանքներին՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

1. *Ընկերությունը բողոքով նշել է, որ Ընթացակարգի հրավերը հանդիսանում է կայքում հրապարակված հրավերների օրինակելի ձևը, սակայն որում առկա են նաև այնպիսի օրենսդրական հղումներ, որոնք տվյալ ընթացակագի համար արդեն իսկ կիրառելի չեն. (…):*

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ թեև Ընթացակարգի վերաբերյալ հայտարարության մեջ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և հրավերով

նախատեսել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Ընթացակարգը կազմակերպելու պայմաններում բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու վերաբերյալ դրույթները, այնուամենայնիվ՝ չնայած վերը շարադրվածին, Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծով սահմանել է վճարման ժամանակացույց, որով սահմանել է, որ ապրանքների ձեռքբերման դիմաց վճարումներ կարող են իրականացվել ապրիլ և դեկտեմբեր ամիսներին, այսինքն՝ այո, հրավերում առկա են անհամապատասխանություններ, որոնք Ընկերությունը, համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, կարող էր վիճարկել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ուստի՝ այս փուլում բողոքաբերի կողմից տվյալ հանգամանքը վկայակոչելը ժամանակավրեպ է:

2. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված այն հարցին, *որ Պատվիրատուի կողմից գնումների պլանով արդեն իսկ նախատեսված են եղել ֆինանսական միջոցներ*, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***09.04.2021թ.՝ ժամը 21:44:38-ին:***

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԿՄԳՀ -ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով արդեն ֆինանսական միջոցների նախատեսմամբ հաստատված գնումների պլանի փոփոխությունը տեղեկագրում հրապարակվել է ***09.04.2021թ.՝ ժամը 21:45:53-ին***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների

պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **<u>որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է</u>:**

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում **<u>պատասխանատու ստորաբաժանումը՝</u>**

<u>1) կազմում և հաստատում է գնման հայտը (...):</u>

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ **պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:**

Կարգի 25-րդ կետի՝ **գնումները համակարգողը գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:** Եթե արձանագրվում է անհամապատասխանություն, ապա գնման հայտը վերադարձվում է պատասխանատու ստորաբաժանմանը՝ նշելով արձանագրված անհամապատասխանությունները: Պատասխանատու ստորաբաժանումն ուղղում և երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողին է ներկայացնում ճշտված գնման հայտը: Արձանագրված անհամապատասխանության հետ չհամաձայնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գնման հայտը վերադարձնում է գնումները համակարգողին, որն այն ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին: Զեկուցագիրն ստանալու օրը **պատվիրատուի ղեկավարը**՝

1) հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը երկու աշխատանքային օրվա ընթացքում տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավական եզրակացությունն ստանալուց հետո **հանձնարարում է՝**

ա. գնումները համակարգողին՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպել՝ հիմք ընդունելով ներկայացված գնման հայտը, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

բ. պատասխանատու ստորաբաժանմանը, ըստ իրավական եզրակացության, վերանայել գնման հայտը:

Կարգի 26-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով **սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին**

<u>հրամանի նախագիծը</u>, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: <u>Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝</u>**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

<u>2) հրավերի տեքստը</u>.:

Այսինքն՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով արդեն ֆինանսական միջոցների նախատեսմամբ հաստատված գնումների պլանի փոփոխությունը տեղեկագրում հրապարակվել է Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակելուց հետո՝ 1 րոպե անց, միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերը շարադրված իրավական նորմերից հետևում է, որ հրավերի տեքստը հաստատելը և հրապարակելը իրենից ենթադրում է մի շարք գործողությունների հաջորդականություն, ինչպես նաև այն, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որն այս դեպքում հրապարակվել է ավելի ուշ, քան Ընթացակարգի հրավերը, այսինքն՝ Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակելու պահին ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել:

3. Ինչ վերաբերում է, *Ընկերության կողմից բողոքով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15-րդ, 24-րդ և 27-րդ չափաբաժինների մասով ևս կայացված որոշումը վիճարկելուն*, ապա հարկ եմ համարում նշել, որ 20.04.2021թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 15-րդ, 24-րդ և 27-րդ չափաբաժինների մասով, այսինքն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համար առնվազն անհասկանալի է թե բողոքաբերն ինչն է վիճարկում այս մասով:

4. Անդրադառնալով Ընկերության կողմից վիճարկվող մյուս՝ 1-ին, 3-5-րդ, 7-14-րդ, 16-րդ, 18-րդ, 22-23-րդ և 29-րդ, չափաբաժիններին՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1.***Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:***

(…)

5. ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

(…)

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, ***բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:***

Այսինքն՝ թեև ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար նոր Հեքիաթ մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ***«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 29.04.2021թ***.՝ մինչև Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելը, այնուամենայնիվ Պատվիրատուի կողմից Օրենքով սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո «Դամկար» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, որի արդյունքում ***Գեղաշենի համայնքապետարանի և «Դամկար» ՍՊԸ-ի միջև 30.04.2021թ. կնքվել է «ՀՀ ԿՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որպիսի պայմաններում, համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Դամկար» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված չափաբաժինների մասով սույն բողոքի քննության արդյունքում պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված չէ:***

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 29.04.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**